

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

2010 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՆԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

20 հուլիսի 2010թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դափարանը՝ կազմով. Վ. Նովհաննիսյանի (նախագահող), Ն. Դանիելյանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թովուզյանի, Ն. Նազարյանի, Վ. Պողոսյանի: Գործով զեկուցող՝ Ռ. Պապայան.

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դափարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի ապրիլի 27-ին Երևանում ստորագրված՝ Նայասպանի Նանրապետության կառավարության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ Նայասպանի Նանրապետության փարածքում Եվրասիական զարգացման բանկի գրնվելու պայմանների մասին համաձայնագրում

ամրագրված պարավորությունների՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի՝ 08.07.2010թ. ՆՏ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Նանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՏ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Ա. Մովսիսյանի գրավոր բացատրությունը, հեղափոխելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայնագիրը կնքվել է 2010 թվականի ապրիլի 27-ին՝ Երեւանում:

2. Համաձայնագրի նպատակն է Նայասպանի Նանրապետության փարածքում Եվրասիական զարգացման բանկի գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծումը, ինչպես նաեւ նրա կարգավիճակի, անձեռնմխելիությունների, առավելությունների եւ արտոնությունների սահմանումը:

3. Համաձայնագրով Նայասպանի Նանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարավորությունները.

- ՆՏ կառավարության կողմից փրամադրել կապի, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կոյուղու, ջրահեռացման, թափոնների հավաքման եւ հակահրդեհային անվտանգության ոլորտներում անհրաժեշտ ծառայություններ Բանկին եւ Ներկայացուցչությանը,

- վերը նշված ծառայությունների դիմաց սահմանել նպաստավոր սակագներ՝ այն օրինաչափությամբ, ինչպես փրամադրվում է ՆՏ փարածքում գտնվող այլ միջազգային կազմակերպություններին կամ դիվանագիտական ներկայացուցչություններին,

- Բանկին, Ներկայացուցչությանը, նրանց եկամուտները, գույքը եւ այլ ակտիվները, ինչպես նաեւ Կանոնադրության համաձայն իրականացվող Բանկի գործողությունները եւ գործարքներն ազատել ցանկացած փեսակի հարկերից, փուրքերից, զանձումներից եւ այլ վճարումներից՝ բացառությամբ վերը նշված ծառայությունների դիմաց գանձվող վճարների,

- ազատել Բանկին եւ Ներկայացուցչությանն իրենց կողմից վճարվող աշխատավարձից եւ պարգեւատրումներից սոցիալական եւ կենսաթոշակային ապահովագրման

համար ապահովագրական մուծումների վճարման պարտականությունից, ենթադրաբար բացառելով ՏՏ քաղաքացիություն ունեցող աշխատակիցների ապահովագրական մուծումները,

- ՏՏ-ում գրնվելու ընթացքում Բանկի, Ներկայացուցչության պաշտոնապար անձանց եւ աշխատակիցներին, ինչպես նաեւ նրանց ընտանիքների անդամներին ազատել ներգաղթի հետ կապված սահմանափակումներից, արտասահմանցիների գրանցման ընթացակարգից եւ գրանցման վճարումներից,

- ձեռնարկել համապարասխան միջոցներ՝ լիազոր ներկայացուցիչների եւ նրանց տեղակալների, Բանկի պաշտոնապար անձանց եւ աշխատակիցների, նրանց ընտանիքների անդամների եւ մասնավոր փնային աշխատողների, Բանկի կողմից պաշտոնապես հրավիրված այլ անձանց ՏՏ փարածք մուտք գործելուն, ժամանելուն, բնակվելուն, մեկնելուն, ՏՏ-ում ազատ տեղաշարժվելուն աջակցելու նպատակով:

Համաձայնագրով սահմանված են նաեւ մեկնաբանման կամ կիրառման հետ կապված վեճերի կարգավորման, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու, ուժի մեջ մտնելու եւ դադարեցման ընթացակարգերը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2010 թվականի ապրիլի 27-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Եվրասիական զարգացման բանկի միջեւ Հայաստանի Հանրապետության փարածքում Եվրասիական զարգացման բանկի գրնվելու պայմանների մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապարասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Նայաստանի Նանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՆՈՂ

Վ. ՆՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

20 հուլիսի 2010 թվականի
ՍԴՈ-905